ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. սեպտեմբերի 9-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Լիանա Տերյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցի քննարկում:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Լիանա Տերյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 8-րդ դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց նախագահի թեկնածու, նշել մնացած չորս անդամների թեկնածուներին ևս:Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն:Նախագահի թեկնածու առաջադրվեց Վեհանուշ Բաղալյանը , որից հետո կատարվեց քվեարկություն: Միաձայն ընտրվեց նախագահ:

Որոշեցին.-8-րդ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. Վեհանուշ Բաղալյան /նախագահ/
2.Նազիկ Գևորգյան /անդամ/
3.Արմինե Հարությունյան /անդամ/
4. Սուսաննա Հարությունյան /անդամ/
5. Անուշ Մանուկյան /անդամ/

2.Լսեցին.- 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Լիանա Տերյանը՝ նշելով, որ այս տարի նոր ուսումնական տարում սահմանվում է հնգօրյա աշխատանքային ռեժիմ: Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների ուսման հարցում, գրենական պիտույքների, համազգեստների և հաճախումների նկատմամբ: Տեղեկացրեց նաև, որ 1-ին կիսամյակը բաղկացած է 15 շաբաթից:

Որոշեցին.- Առավել ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: Պահել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, անհրաժեշտության դեպքում մեծացնել երեխաների վերահսկողությունը, որպեսզի կարողանան առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Վեհանուշ Բաղալյան
Քարտուղար՝ Նազիկ Գևորգյան